

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07.09.2018

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի ընտրովի անդամների քվեարկության հարցը: / Ջեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. Մասնաճյուղի գիտխորհրդի երկու ընտրովի անդամների հարցը: / Ջեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրման և հաստատման մասին: / Ջեկուցող՝ Վ. Աղաբաբյան/
4. Ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում: / Ջեկուցող՝ Կ. Պողոսյան/
5. Ամբիոնների 2018-2019 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: / Ջեկուցող՝ Կ. Պողոսյան/
6. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: / Ջեկուցող՝ Կ. Պողոսյան/

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ: Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ֆակուլտետի գիտական խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի դեկանն է: Ֆակուլտետի գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50%-ը: Ջեկուցողը ներկայացրեց, որ ֆակուլտետի

գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհքյուրոյի նախագահը: Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով:

Ձեկուցողը նաև նշեց, որ գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները: Դեկանը նշեց, որ բոլոր ամբիոններում իրականացվել են քննարկումներ, լսել են բոլոր առաջարկությունները: Ի վերջո որպես ֆակուլտետի գիտական խորհրդի ընտրովի անդամներ առաջարկվել են Ռուսաց լեզվի սեկցիայի ղեկավար Բ.Գ.Թ., ասիստենտ Անժելա Այդինյանի, Հեռակա ուսուցման բաժնի վարիչի տեղակալ Բ.Գ.Թ., ասիստենտ Մուշեղ Սարուխանյանի, Հասարակության հետ կապերի և մամուլի պատասխանատու Բ.Գ.Թ., ասիստենտ Հասմիկ Վանյանի, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրի ղեկավար Խ.Գ.Թ., դոցենտ Լևոն Սարգսյանի, Անգլերեն լեզու և գրականություն կրթական ծրագրի ղեկավար Շ. Գրիգորյանի և Հայոց պատմություն կրթական ծրագրի ղեկավար պ.գ.թ., ասիստենտ Նաթելլա Գրիգորյանի թեկնածությունը:

Նշվեց, որ գիտական խորհրդի անդամների 25%-ը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացրել է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը և ներկայացրել վեց ուսանողների թեկնածություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Խ.Գ.Թ., դոցենտ Ա. Կոբեյյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում հանգամանորեն քննարկվել են ֆակուլտետի գիտական խորհրդի

ընտրովի անդամների թեկնածությունը: Արտահայտվողները բարձր գնահատեցին առաջադրված թեկնածուների գիտական և մասնագիտական որակները:

Տեղի ունեցավ բաց քվեարկություն, որի արդյունքով առաջադրված թեկնածուները միաձայն ընտրվեցին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Քվեարկության արդյունքները հաշվի առնելով՝ հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունը:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ մասնաճյուղի գիտխորհրդի կազմում, բացի ի պաշտոնե ներգրավված անդամներից, պետք է ընդգրկված լինեն նաև ֆակուլտետի երկու ներկայացուցիչներ:

Դեկանը նշեց, որ բոլոր ամբիոններում իրականացվել են քննարկումներ, լսել են բոլոր առաջարկությունները: Ի վերջո որպես ֆակուլտետի գիտական խորհրդի ընտրովի անդամներ առաջարկվել են Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Վաչագան Ավագյանի և Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Բ.Գ.Թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի թեկնածությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Կոբեյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

Տեղի ունեցավ բաց քվեարկություն, որի արդյունքով առաջադրված թեկնածուները միաձայն ընտրվեցին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Քվեարկության արդյունքները հաշվի առնելով՝ հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կողմից մասնաճյուղի գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունը:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի տեղակալ Վ. Աղաբաբյանը: Ձեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Վ. Աղաբաբյանը փաստեց, որ նշված կիսամյակում ֆակուլտետում նկատելի ավելացել է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը բավարար հիմք է հանդիսանում նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանող Վանուհի Գևորգյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Վանուհի Գևորգյանին առաջադրել «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Շ. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ավագ Էլինա Խաչատրյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Էլինա Խաչատրյանին առաջադրել «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Ձեկուցողը «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներից առանձնացրեց 3-րդ կուրսի ավագ Աստղիկ Ղազարյանի թեկնածությունը: Վերջինս չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ՝ Ա. Ղազարյանը ոչ միայն ցուցաբերում է գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն և օրինակելի վարք, այլ նաև ակտիվորեն մասնակցում է

մասնաճյուղում և հանրապետությունում կազմակերպվող մի շարք գիտական նստաշրջանների: Զեկուցողը առաջարկեց Աստղիկ Ղազարյանին ներկայացնել որպես «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Շ. Գրիգորյանը ներկայացրեց, որ տվյալ մասնագիտության ուսանողներից առաջադիմությամբ աչքի է ընկել նաև 4-րդ կուրսի ուսանող Սյուզաննա Շահնազարյանը: Նա վերջին չորս կիսամյակում ունի անընդմեջ գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Սյուզաննա Շահնազարյանին առաջարկել որպես «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներից առանձնացրեց նաև 4-րդ կուրսի ուսանող Լիլիթ Ֆարմազյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ՝ Լ. Ֆարմազյանը ցուցաբերում է հասարակական ակտիվություն և օրինակելի վարք: Զեկուցողը առաջարկեց Լիլիթ Ֆարմազյանին ներկայացնել որպես «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներից առանձնացրեց 4-րդ կուրսի ուսանող Լիլիթ Եզանյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ՝ Լ. Եզանյանը ցուցաբերում է հասարակական ակտիվություն և օրինակելի վարք: Զեկուցողը առաջարկեց Լիլիթ Եզանյանին ներկայացնել որպես «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Վանուհի Գևորգյանին որպես «Մխիթար Գոշ», Էլինա Խաչատրյանին՝ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ», Աստղիկ Ղազարյանին՝ «Գրիգոր Նարեկացի», Սյուզաննա Խաչատրյանին՝ «Շառլ Ազնավուր», Լիլիթ Ֆարմազյանին՝ «Վազգեն Սարգսյան» և Լիլիթ Եզանյանին՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող հինգ կրթական ծրագրերի կողմից դեռևս նախորդ ուստարվա ավարտին տրված կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Կոբեյյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում քննարկվել է յուրաքանչյուր թեմայի վերնագիրը, հստակեցվել կուրսային և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2018-2019 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Դա կոյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Կոբեյյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Անգլերեն լեզվի և գրականության, Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնների և Ռուսաց լեզվի և գրականության սեկցիայի 2018-2019 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2018-2019 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Կոբեյյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան

Վ. Աղաբաբյան